

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔՈՒՄ

Հունիսի 27-ը մեծ ուրախության օր էր Այրիվանքի միաբանության համար: Վեհափառ Հայրապետը ուխտի պիտի գար Ս. Գեղարդա վանք: Ցերեկվա ժամը մեկին, ուղեկցությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանի, ինչպես նաև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ պր. Գառնիկ Քեհյայանի ու միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար պր. Պարգև Շահբազյանի, Նորին Սրբությունը ժամանեց Ս. Գեղարդա վանք: Պատշաճ ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետը իր ուղեկիցներով առաջնորդվեց տաճար: Պատմական տաճարի սրբական կամարների ներքո տիրեց խորհրդավոր լռություն: Ապգիս Սրբազնագույն Հայրապետը մեր Ս. Եկեղեցու, ապգի, ինչպես նաև աշխարհի հարատև խաղաղության մտահոգությունները իր հոգում, գլխահակ աղոթում էր՝ հաստատապես համոզված լինելով, որ աշխարհի և մեր ժողովրդի վաղվա ապահովությունը անպայմանորեն կապված է Աստուծո պարգևած խաղաղության հետ: Աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը վանահոր առաջնորդությամբ դիտեց Ս. Գեղարդա վանքի ողջ հնամալիրը՝ մի անգամ ևս հիանալով մեր շինարար ու ստեղծագործ նախնիների տաղանդով: Աստուծո փառքի համար կերտված աղոթքի այս տները կառուցելիս մեր նախնիները թափանցել են ժայռերի խորքը՝ երկնելու համար կարմանահրաշ, անկրկնելի ժայռափոր տաճարների այս շարքը: Տաճարի համալիրը դիտելուց հետո, Նորին Սրբությունը դիտեց նաև վանքի հարավարևմտյան կողմում մի քանի շաբաթ առաջ բացված «Տարոնական Ոգուն» նվիրված գեղեցիկ աղբյուր-հուշարձանը, որի մեկենասն է փարիզահայ Մարտիկ-Օհան Տակառյանը:

Վանքի ներքին, հոգևոր, կազմակերպչական և վանական տնտեսության մասին մանրամասն տեղեկություններ տվեց վանահայրը: Կարճ հանգստից հետո Նորին Սրբությունը մասնակցեց իր պատվին կազմակերպված ճաշին, որը տեղի ունեցավ վանքի վանական սեղանատանը: Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը միաբանության և աշխատակիցների անունից մի անգամ ևս բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը: Վեր հանելով Հայոց Հայրապետի երեսնամյա հայրապետական փառավոր գործունեությունը,

արժանապատիվ տեր հայրը ասաց նաև, որ «...Ս. Գեղարդա վանք ուխտի եկողները և հպարավոր այցելուները այստեղ, մեր վանքում ականատես են մեր Սուրբ Եկեղեցու ճշմարիտ նյութական և հոգևոր վերապարթոնքին, որը արդեն երեսուն տարի է, որ շարունակվում է: Երբեմն փորձել եմ մեր օրերի եկեղեցական վերապարթոնքը համեմատել անցյալի մեր եկեղեցական վերապարթոնքների հետ, բայց հավատացեք, որ համեմատության ոչ մի եզր չեմ գտել, քանզի անցյալի նմանօրինակ եկեղեցական լուսավոր շարժումները դժբախտաբար եղել են կարճատև: Փառք Աստուծո, մեր օրերի վերապարթոնքը, սկսված Ձերդ Սրբության մարգարեաշունչ տեսիլքով և միայն Ձեր Սրբական անձին յուրահատուկ լավատեսությամբ, արդեն շարունակվում է երեսուն տարի, որի համար մեր Եկեղեցին ու մեր ազգը պարտական են Ձեր սուրբ Անձին: Մենք միշտ աղոթող ենք Ձեր թանկագին կենաց համար: Թող Աստված երկար ու քաջառողջ կյանք պարգևի Ձերդ Վեհափառությանը: Իսկ դրանում բոլորս հաստատ համոզված ենք, քանի որ Ձեզ հետ է մեր ամբողջ ազգի անմնացորդ սերն ու աղոթքը»:

Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքում դրական գնահատելով Ս. Գեղարդա վանքի միաբանության ջանքերը հոգևոր սպասարկման ասպարեզում՝ պատվիրեց է՛լ ավելի ուշադիր և հոգատար լինել հավատացյալների նկատմամբ: Նայելով ծերունապարդ և իմաստուն մեր Հայրապետին, զգում ես, որ մեծագործ Հայրապետը իր անձնական երջանկությունը, երիտասարդ մընալու գաղտնիքը տեսնում է միայն իր Հոտի և մեր Ս. Եկեղեցու վերապարթոնքի և միասնականության մեջ, որը երաշխիքն է մեր ազգի և Եկեղեցու գալիք հաջողությունների:

Այսօր Հայոց Հայրապետը ուխտի է եկել Ս. Գեղարդա վանք՝ իր ուխտը նորոգելու և Ս. Գեղարդա բարձունքից դիտելու և հիանալու վերածնված մեր երկրի բերքառատ դաշտերով ու այգիներով և օրհնելու իր երկրի բախտը տնօրինող մեր սքանչելի ժողովրդին:

Ուշ երեկոյան Նորին Սրբությունը օրհնելով վանքի միաբանությանն ու աշխատակիցներին՝ իր ուղեկիցների հետ ուրախ տրամադրությամբ վերադարձավ Մայր Աթոռ:

Ուխտդ կատար, Վեհափառ Տեր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ